ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԱՐԱՖՅԱՆ ՆԱՐԵԿ ԳԱԳԻԿԻ

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1988-1990 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարուքյան Արմեն Ցոլակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բալայան Վահրամ Ռազմիկի

պատմական գիտությունների թեկնածու
Հայրապետյան Տաթևիկ Արմենի

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հուլիսի 8-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մայիսի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ադրբեջանը, որպես առանձին պետություն, իր ստեղծման առաջին օրերից՝ 1918 թ. մայիսից, վարել է ազգային խտրականության քաղաքականություն իր իշխանության տակ հայտնված տեղաբնիկ ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի նկատմամբ:

Խտրական քաղաքականությունն Ադրբեջանում շարունակվել է նաև այդ երկրի խորհրդայնացումից: Խորհրդային տարիներին Արդբեջանում էթնիկ քաղաքականությունն առավելապես ունեցել է թաքնված դրսևորումներ: Որպես տեղաբնիկ ազգ՝ հայերն Ադրբեջանում հաճախ եղել են ազգային խտրական քաղաքականության կենտրոնում:

Արդեն 1988 թ.-ից՝ Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (այսուհետ նաև՝ Ադրբեջանական ԽՍՀ) Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) հայ բնակչության ինքնորոշման իրավունքի համար ծավալված հասարակական-քաղաքական շարժման համատեքստում Ադրբեջանում տարվող հակահայկական քաղաքականությունը ստացավ լայնածավալ և կանոնավոր բռնությունների տեսք: 1988 թ. փետրվարի 27-29-ին հայերի նկատմամբ լայնածավալ հարձակումներ տեղի ունեցան Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում: Սումգայիթի հայերի ջարդերով տրվեց հայերի դեմ Ադրբեջանում տարվող խտրական քաղաքականության նոր փուլի մեկնարկը, որով ենթադրվում էր հայերի դեմ կանոնավոր զանգվածային ոճրագործությունների կազմակերպում և խրախուսում:

1988-1990 թթ. Ադրբեջանում հայերի ջարդերը, հետապնդումները և բռնագաղթը շարունակական գործընթաց էր, որն ունեցավ մի քանի բարձրակետ: Սումգայիթի հայերի ջարդերից հետո հայերի դեմ լայնածավալ հարձակումների հաջորդ ալիքները տեղի ունեցան համապատասխանաբար 1988 թ. նոյեմբերին Կիրովաբադում (Գանձակ) և դրան հարակից շրջաններում, իսկ 1990 թ. հունվարին՝ մայրաքաղաք Բաքվում: Իրադարձությունների այս ընթացքը հանգեցրեց Ադրբեջանում բնակվող հայերի ամբողջական բռնագաղթի, Խորհրդային Միության համար աննախադեպ թվով անձանց՝ ազգային շարժառիթներով սպանության, բռնաբարությունների, թալանի, Ադրբեջանի հայ բնակչության ամբողջական ունեզրկման:

Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի նկատմամբ հարձակումների անմիջական հետևանքն էր նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության անցումը էթնիկ բախման առավել սուր փուլի, ինչը հանգեցրեց պատերազմի բռնկման: Ըստ 1989 թ. Խորհրդային Միությունում անցկացված մարդահամարի տվյալների՝ ԼՂԻՄ բնակչության գրեթե 77 %-ը կազմում էին ազգությամբ հայեր, իսկ մոտ 22 %-ը՝ ադրբեջանցիներ[1]: Ադրբեջանում հայերի դեմ տարվող հետևողական քաղաքականությունը ակնհայտ էր դարձնում, որ ԼՂԻՄ-ի՝ Ադրբեջանի կազմում մնալը հանդիսանում է այնտեղ բնակվող մոտ 145 հազար հայերի կյանքի համար ուղղակի սպառնալիք: Ի հակառակ դրան՝ Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը մշտապես ներկայացրել է փաստարկներ թե՛ Լեռնային Ղարաբաղում և թե՛ Ադրբեջանում հայերի ու ադրբեջանցիների խաղաղ և անվտանգ

[1] "Всесоюзная перепись населения 1989 года. Распределение городского и сельского населения областей республик СССР по полу и национальности", Демоскоп (дата верификации 07.02.2021).

համակեցության պատմական փորձի մասին և պնդել այն ապահովելու հարցում իր շարունակական հանձնառությունը: Այդ եղանակով ամբողջությամբ ստվերվել է Արցախյան շարժման էությունը. այն միջազգային հանրությանը հաջողությամբ մատուցվել է անջատողական (սեպարատիստական), ազգայնական և տարածքների համար պայքարի «շրջանակների» մեջ:

Վերոնշյալ համատեքստում քննարկվող թեման արդիական է՝ հատկապես հաշվի առնելով Ադրբեջանի իշխանությունների կողմից Արցախի Հանրապետության կարգավիճակի վերաբերյալ ընթացող քաղաքական բանակցությունների տապալումը, ինչպես նաև Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին նախաձեռնված 44-օրյա պատերազմը, որի հետևանքներն արցախահայության համար ստեղծել են գոյաբանական սպառնալիքներ:

Աշխատանքի շրջանակներում Սումգայիթի, Կիրովաբադի (Գանձակ) և Բաքվի հայերի նկատմամբ իրականացված ջարդերի և այլ հանցագործությունների օրինակներով ուսումնասիրվում են Ադրբեջանում 1988-1990 թթ. տարված հակահայկական քաղաքականության դրսևորումները: Հետազոտությամբ փորձ է կատարվում համակարգված եղանակով, փաստարկված և ապացուցողական հենքի վրա ներկայացնել նշված իրադարձությունները, դրանցում առկա օրինաչափությունները, հայերի նկատմամբ իրագործված զանգվածային ոճրագործությունների կազմակերպված լինելու հանգամանքը և դրանց հետևանքները: Միևնույն ժամանակ, քննարկվող ժամանակահատվածում Ադրբեջանում տեղի ունեցած իրադարձությունները բավարար չափով չեն քննարկվել հայերի նկատմամբ իրագործված հանցավոր արարքների միջազգային քրեական իրավունքով դատապարտելի լինելու տեսանկյունից:

Քննարկվող ժամանակահատվածում հայերի դեմ տեղի են ունեցել զանգվածային ոճրագործություններ (անգլերեն՝ «mass atrocities»), որոնք դրսևորվել են հայերի սպանությունների, բռնաբարությունների և այլ տեսակի ֆիզիկական բռնությունների, բռնի տեղահանությունների կազմակերպման, հայերին պատկանող գույքի ավերման և նրանց ունեզրկման եղանակներով: Չնայած այն հանգամանքին, որ «զանգվածային ոճրագործություններ» եզրույթը ձևական առումով չունի հստակ իրավական սահմանում՝ դրա ներքո, որպես կանոն, ներառվում են ցեղասպանությունը, մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները (այդ թվում՝ էթնիկ զտումը) և պատերազմական հանցագործությունները:

Աշխատանքով նաև փորձ է կատարվում հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի զանգվածային հանցավոր արարքները քննարկել՝ հաշվի առնելով վերջին տասնամյակների ընթացքում միջազգային քրեական իրավունքի կիրառման հարուստ փորձը: Աշխատությունը կարող է հիմք հանդիսանալ Արցախի Հանրապետության իրավունքների պաշտպանության հարցում պատմական, քաղաքական և իրավական հարթություններում լրացուցիչ փաստարկների ներկայացման համար:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է Ադրբեջանական ԽՍՀ-ում 1988-1990 թթ. տարվող քաղաքականության համատեքստում պատմական վերլուծության ենթարկել հայերի դեմ կատարված հանցագործությունները և այդ հիմքով արարքներին տալ պատմաիրավական գնահատական: Այդ նպատակից ելնելով՝ ատենախոսության համապատասխան գլուխներում և ենթագլուխներում առաջադրվել են որոշակի խնդիրներ: Մասնավորապես՝ առաջադրվել են

հետազոտության հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել 1988-1990 թթ. Ադրբեջանում հայերի զանգվածային ջարդերի պատմական ակունքները և նախադրյալները, այդ թվում՝ Ադրբեջանի էթնիկ խտրականության քաղաքականության էությունը,
- ուսումնասիրել Ադրբեջանական ԽՍՀ Սումգայիթ, Կիրովաբադ (Գանձակ) և Բաքու քաղաքներում հայերի ջարդերի նախապատրաստման, մեկնարկի, ընթացքի, հետևանքների և դատապարտման փուլերը, դրանցում առկա կրկնվող օրինաչափությունները, ինչպես նաև համակողմանիորեն վերլուծել ջարդերի կազմակերպված լինելու վերաբերյալ պատմական փաստերը,
- Ադրբեջանական ԽՍՀ Սումգայիթ, Կիրովաբադ (Գանձակ) և Բաքու քաղաքներում հայերի ջարդերին տալ պատմահիրավական գնահատական՝ դրանց փաստական հանգամանքները համադրելով միջազգային հանցագործությունների հանցակազմերի տարրերի հետ,
- պարզել Ադրբեջանական ԽՍՀ-ում 1988-1990 թթ. տեղի ունեցած հայերի ջարդերում Ադրբեջանի Հանրապետությանը միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու հնարավորությունները:

Հետազոտության մեջ համապարփակ քննության են ենթարկվում թեմայի վերաբերյալ պատմական աղբյուրները և ապացույցները, այդ թվում՝ դատահիրավական հասանելի փաստաթղթերը, ականատեսների վկայությունները, ժամանակի մամուլի նյութերը, տարբեր հեղինակների աշխատությունները, որոնք համադրվում են միջազգային իրավական նորմերի և նախադեպերի հետ, ինչի արդյունքում կատարվում են համապատասխան եզրահանգումներ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը: Ատենախոսության ժամանակագրական շրջանակը 1988-1990 թթ. են: Ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է մինչև Խորհրդային Միության փլուզումը և Արցախյան պատերազմի ակտիվ փուլի մեկնարկը Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի զանգվածային ջարդերը որպես մեկ շարունակական քաղաքականության դրսևորումներ դիտարկելու անհրաժեշտությամբ: 1988-1990 թթ. Ադրբեջանում հայերի ջարդերն իրենց պատմական համատեքստում դիտարկելու նկատառումներից ելնելով՝ հետազոտությունում ներկայացվում են նաև Ադրբեջանի՝ որպես առանձին պետության կազմավորումից առաջ և դրանից հետո, այդ թվում՝ երկրի խորհրդայնացումից հետո, հայերի նկատմամբ տարվող էթնիկ խտրականության քաղաքականության հիմքերը և դրսևորման ձևերը: Նշված իրադարձությունները և դրսևորումներն ուղղակիորեն կապված են 1988-1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի ջարդերի հետ, քանի որ դրանք պատմականորեն հիմք են դարձել ժամանակակից Ադրբեջանի կողմից վարվող հայատյաց քաղաքականության համար:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ատենախոսության ընթացքում կիրառվել են պատմականության, համեմատական և պատմական-համակարգային վերլուծության մեթոդները: Համակարգային վերլուծության կիրառմամբ իրականացվել է Ադրբեջանական ԽՍՀ-ում տեղի ունեցած հայերի ջարդերի հանգամանքների վերհանում, փաստերի հավաքագրում և համակարգում, ինչի հիման վրա հնարավոր է եղել առանձնացնել յուրաքանչյուր իրադարձության նախապատրաստման, մեկնարկի, ընթացքի և հետևանքների հիմնական առանձնահատկությունները և

օրինաչափությունները: Հաշվի առնելով, որ հետազոտության նպատակը նաև արարքների համադրումն է միջազգային հանցագործությունների հանցակազմերի հետ՝ իրականացվել է նաև միջգիտակարգային համադրում: Մասնավորապես՝ վերհանված պատմական փաստերը համադրվել են միջազգային իրավունքի աղբյուրների և դատական նախադեպերի հետ՝ արարքներին պատմահրավական գնահատականներ տալու նպատակով:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Ատենախոսության մեջ հնարավորինս տարբեր աղբյուրների համադրմամբ ներկայացվել է 1988-1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի նկատմամբ տարվող խտրական քաղաքականության, տեղի ունեցած իրադարձությունների մասշտաբների և կազմակերպման մակարդակի իրական պատկերը:

2. Ատենախոսության մեջ, հիմք ընդունելով Կիրովաբադի (Գանձակ) ջարդերի վերաբերյալ վերջին տարիներին հրապարակված փաստաթղթերը և վկայությունները, ինչպես նաև դեպքերի վերաբերյալ նախաքննություն իրականացրած ԽՍՀՄ մարմինների ներկայացուցիչների հաղորդած տվյալները, ներկայացվում է հայերի դեմ կատարված հարձակումների բնույթը և դրանց նշանակությունը իրադարձությունների ընդհանուր համատեքստում:

3. Ուսումնասիրությունը 1988-1990 թթ. Խորհրդային Ադրբեջանում հակահայկական հարձակումները համադրում է պետության գոյության ամբողջ ընթացքում ադրբեջանցիներից տարբերվող այլ ազգերի և էթնիկ խմբերի նկատմամբ տասնամյակների ընթացքում հետևողականորեն տարվող քաղաքականության համատեքստում:

4. Պատմագիտական ուսումնասիրության և իրավագիտական վերլուծության հիման վրա ատենախոսության մեջ 1988-1990 թթ. Ադրբեջանում հայերի ջարդերի վերաբերյալ պատմական տվյալները վերհանվել, համակարգվել և ներկայացվել են՝ ըստ դրանց իրավական նշանակության:

5. Քննարկման առարկա պատմական իրադարձությունները համադրվել են միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հետ, ինչի արդյունքում արարքները քննարկվել են դրանց իրավական ճշգրիտ որակման տեսանկյունից:

Ատենախոսության գործնական նշանակությունն կայանում է նրանում, որ աշխատանքը պատմական, իրավական և քաղաքական հարթություններում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար ներկայացնում է լրացուցիչ փաստարկներ, որոնք կարող են իրացվել իրավական կամ դիվանագիտական ուղիներով: Մասնավորապես՝ Արցախի Հանրապետության կարգավիճակի վերաբերյալ բանակցություններում հայկական կողմերը վերջին տարիներին հաճախ որպես փաստարկ օգտագործում են «անջատում՝ հանուն փրկության» (անգլերեն՝ «remedial secession») միջազգային իրավական սկզբունքը: Եթե հակիրճ ներկայացնենք «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքի էությունը, այն կայանում է նրանում, որ եթե խմբի (այդ թվում՝ ազգային) միավորումը որևէ պետությանը առաջացնում է միջազգային իրավունքի իմպերատիվ սկզբունքների էական խնդիրներ (օրինակ՝ ցեղասպանվելու, էթնիկ զտման ենթարկվելու վտանգներ), ապա տվյալ խմբին պետք է ընձեռվի ինքնորոշման իրավունք՝ որպես փրկության վերջին միջոց: Հաշվի առնելով Արցախի

փաստացի անկախությունը և արցախահայության ինքնորոշման իրավունքի փաստացի իրացված լինելը՝ «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքն այս առումով պետք է մեկնաբանվի որպես Ադրբեջանի Հանրապետության կազմում Արցախի Հանրապետության որևէ կարգավիճակով լինելը բացառելու ձևով: Այսինքն՝ 1988-1990 թթ. Ադրբեջանում հակահայկական հարձակումների պատմահրավական ճիշտ գնահատումը կարող է էական նշանակություն ունենալ Արցախի Հանրապետության կարգավիճակի հարցի շուրջ բանակցություններում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Նախկինում հիմնահարցը ամբողջական և համակողմանի պատմահրավական ուսումնասիրության չի ենթարկվել: Հիմնահարցի վերաբերյալ հրատարակվել են ականատեսների վկայություններ, անձնական հիշողություններ, փաստաթղթերի ժողովածուներ, դատահրավական տարբեր փաստաթղթեր և թեմային առանձին խնդիրներին նվիրված աշխատություններ:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը բազմազան է: Այն շարադրվել է արխիվային նյութերի (այդ թվում՝ անձնական արխիվներից), փաստաթղթերի ժողովածուների, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով մասնագիտական գրականության, հրապարակված մամուլի և համացանցի կայքէջերում տեղ գտած նյութերի հիման վրա: Ստորև հակիրճ կներկայացվեն աշխատանքի նպատակից ելնելով առավել կարևոր նշանակություն ունեցող աղբյուրները:

Դեռևս մինչև քննարկվող ժամանակաշրջանը Ադրբեջանի պատմության ընթացքում այլ ազգերի նկատմամբ ռասիստական և խտրական քաղաքականության ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են Լ. Չորբաջյանի[2], Ս. Կոֆմանի[3], Հ. Ավետիսյանի[4], Վ. Բարտոլդի[5], Շ. Մկրտչյանի[6], Գ. Ստեփանյանի[7], Օ. Տրանկայի[8] և այլ հեղինակների աշխատանքներ:

Սումգայիթի դեպքերի ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն է ունեցել Սումգայիթի հայերի պաշտպանության հանձնախմբի ղեկավար Հրայր Ուլուբաբյանի՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամում գտնվող անձնական արխիվի փաստաթղթերը: Նշված արխիվում հավաքագրվել և պահպանվել են Սումգայիթի ջարդարարների վերաբերյալ դեռևս ԽՍՀՄ գոյության տարիներին իրականացված դատավարության փաստաթղթերը, այդ թվում՝

---

[2] Տե՛ս Chorbajian L., Making of Nagorno-Karabagh: From Secession to Republic, London, Palgrave Publishers, 2001, 267 pp.

[3] Տե՛ս Kaufman S., Modern Hatreds: The symbolic politics of ethnic war, Ithaca and London, Cornell University Press, 2001, 262 pp.

[4] Տե՛ս Аветисян Г., Этнические и региональные конфликты в Евразии. Кн. 1., Центральная Азия и Кавказ, Москва, 1997, стр. 130-159.

[5] Տե՛ս Бартольд В., Сочинения: В 9-ти томах. Т. 2. Ч. 1: Общие работы по истории Средней Азии. Работы по истории Кавказа и Восточной Европы. Издательство Восточной Литературы, Москва, 1963, 1020 с.

[6] Տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ», 2003, 238 էջ:

[7] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2011, 651 էջ:

[8] Տե՛ս Tranca O., “What Causes Ethnic Conflict Diffusion? A Study of Ethnic Conflicts in Azerbaijan and Macedonia,” Journal of Peace, Conflict & Development Issue 12, May 2008, Bradford, Retrieved September 6 2021, from http://www.peacestudiesjournal.org.uk.

ցուցմունքներ և վերջնական դատական ակտեր: Առավել կարևոր նշանակություն ունեն Վորոնեժի շրջանային դատարանի կողմից Մեհտիևի, Ռզաևի և Տուրաբիևի գործով կայացված դատավճիռը[9], ինչպես նաև Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի դատավճիռը[10]: Անձնական արխիվի նյութերից բացի, մանրամասն ուսումնասիրվել են նաև Հ. Ուլուբաբյանի՝ թեմայի առնչությամբ մասնագիտական աշխատանքները[11]:

Սումգայիթի իրադարձությունները վերլուծելու համար կարևոր նշանակություն ունեն նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից հատուկ այդ նպատակով ստեղծված կայքէջում[12] հրապարակված փաստաթղթերը և վկայությունները:

Սումգայիթի հայերի ջարդերի առնչությամբ նաև ուսումնասիրվել է Եվրոպական խորհրդարանի Հայաստանի շրջափակման և մարդու իրավունքների կարգավիճակի վերաբերյալ բանաձևը, որը Հայաստանում 300,000 հայ փախստականների առկայությունն ուղղակիորեն պայմանավորում է Սումգայիթի և Բաքվի հայերի ջարդերով[13]: Էական կարևորություն է ունեցել Պավել Գևորգյանի Սումգայիթի դատավարության օրացույցը[14], որում արձանագրված են դատական նիստերը և դատավարական գործողությունները: Ուսումնասիրվել է 1988 թ. փետրվարի 29-ին տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի նիստի սղագրությունը, որում ևս առկա են տվյալներ ջարդերի ժամանակ խորհրդային միլիցիայի անգործության վերաբերյալ: Այդ փաստաթղթերը կարևոր են ոչ միայն փաստական հարուստ տվյալներով, այլ նաև իրենց իրավական նշանակությամբ: Դրանցով հիմնավորվում են հանցագործների արարքների ազգայնական շարժառիթները:

Միաժամանակ, հետազոտության համար կարևոր նշանակություն է ունեցել Սամվել Շահմուրադյանի հավաքագրած վկայությունների հիման վրա հրատարակված «Սումգայիթյան ողբերգությունը ականատեսների վկայություններում» երկհատորյակը[15]:

---

[9] Տե՛ս Приговор Воронежского областного суда по делу Мехдиева, Рзаева, Турабиева, 20 декабря 1988г., (дата верификации 21.12.2021).

[10] Տե՛ս Приговор судебной коллегии по уголовным делам по I инстанции Верховного суда Азербайджанской ССР, 28 марта 1989г., (дата верификации 21.12.2021).

[11] Տե՛ս Улубабян Г. Б., Сумгаит: «Народу нужна вся правда», «Литературная Армения», N 4, Ереван, 1991, стр. 95-105,
http://karabakhrecords.info/publication_articles_sumgait_narod_pravda.html (дата верификации 21.12.2021).
Улубабян Г.Б., В Сумгаите погибло 32 человека. Ложь! «Эпоха», сентябрь, N4, Москва, 1990,
http://sumgait.info/press/epokha/epokha-9009_N4.htm (дата верификации 21.12.2021).
Улубабян Г.Б., Сумгаит - на суд истории, «Коммунист», Ереван, 15 июня 1990, http://sumgait.info/press/golos-armenii/golos-900615.htm (дата верификации 21.12.2021).
Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит… Геноцид… Гласность?, Ереван, Общество «Знание» Армянской ССР, 1989, 63 с.

[12] Տե՛ս https://www.prosecutor.am/ru/az/ (21.06.2021):

[13] Տե՛ս European Union: European Parliament, European Patliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there, 14 March 1991, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:1991:106:FULL&from=EN (accessed 21.12.2021).

[14] Տե՛ս Геворкян П.С., Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, Издательский центр Степанакертского полиграфпредприятия, 1998, 87 с.

[15] Տե՛ս Шахмурадян С.С., Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, книга первая, Ереван, Армянский фонд культуры, 1989, 427 с. և Обыкновенный геноцид. Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, книга вторая, Ереван, Центр общественных связей и информации, 2015, 217 с.

Այդ աշխատանքների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում Սումգայիթի դեպքերի ընթացքում առկա օրինաչափությունները տեսնելու հենց ականատեսների աչքերով: Սումգայիթում ադրբեջանցի ականատեսների հասանելի վկայություններն ամփոփել է Մ. Գրիգորյանը[16]:

Սումգայիթում տեղի ունեցած ջարդերի կազմակերպված լինելու վերաբերյալ կարևոր վերլուծություն է կատարել Ա. Մարուքյանը[17], որով անդրադարձ է կատարվել նաև որոշ իրավական հարցադրումների: Սումգայիթի և Բաքվի դեպքերը միասնական պետական քաղաքականության հարթությունում դիտարկել և վերլուծել են Էդ. Մինասյանի[18] կողմից: Սումգայիթում ԽՍՀՄ զորքերի տեղակայման հետ կապված կարևոր մանրամասներ է ներկայացրել Ա. Մոստովոյը[19]:

Սումգայիթյան ջարդերի վերաբերյալ պատմական հիշողության թեման մանրամասնորեն հետազոտվել է Հ. Մարությանի[20] կողմից: Նշված աշխատանքներում ներկայացվում է Արցախյան շարժման օրերին Սումգայիթի ջարդերի պատշաճ դատապարտման, դրանց քաղաքական գնահատման վերաբերյալ հայ ժողովրդի պահանջները, ժամանակի ընթացքում դրանց փոխակերպումները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագման և նախապատմության ուսումնասիրություն է կատարել Թ. դե Վաալը[21], որում հակիրճ քննարկվել են նաև Ադրբեջանում հայերի ջարդերը: Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ իրենց վերլուծություններում Ադրբեջանում հայերի ջարդերին են անդրադարձել նաև Դ. Լեյտնը և Ռ. Սանին[22], Ք. Ցուրկերը[23], Լ. Չորբաջյանը[24] և Ա. Մելիք-Շահնազարովը[25]: Իսկ Սումգայիթի ջարդարարների՝ Ադրբեջանում դատապարտման վերաբերյալ տվյալներ են հաղորդել Ք. Քոքսը և Ջ. Էյբները[26]:

---

[16] Տե՛ս Обыкновенный геноцид, Сумгаит: Говорят свидетели-азербайджанцы, Ереван, Центр общественных связей и информации, 2018, 136с.

[17] Տե՛ս Марукян А.Ц., Правовые аспекты проявления геноцида армян на территории Азербайджана в 1988-1990 гг. на примере Сумгаита, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ. «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 9, Երևան, 2008, էջ 279-287:

[18] Տե՛ս Մինասյան Էդ., Սումգայիթի և Բաքվի ջարդերը՝ Ադրբեջանի ցեղասպան պետական քաղաքականություն, «ԱրՊՀ Գիտական ընթերցումներ», Ստեփանակերտ, 2018, էջ 469-476:

[19] Տե՛ս Мостовой А., Резня. О событиях в г. Сумгаит (февраль 1988г.), 1999, http://sumgait.info/sumgait/mostovoy/sumgait-mostovoy.htm (дата верификации 21.12.2021).

[20] Տե՛ս Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը, Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 432 էջ; տե՛ս նաև Մարութեան Յ., Սումգայիթեան ջարդեր. Իրողութիւն, գնահատում և պատմական յիշողութիւն, Հանդէս Ամսօրեայ. Հայագիտական ուսումնաթերթ, թիւ 1-12, յունուար-դեկտեմբեր, Վիեննա-Երևան, 2002, էջ 157-206:

[21] Տե՛ս De Waal T., Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York and London, New York University Press, 2013, 387 pp.

[22] Տե՛ս Laitin D., Suny R, Karabakh: Thinking a Way out of Karabakh, Middle East Policy, Vol. 7, No. 1, Washington, October 1999, pp. 145-176.

[23] Տե՛ս Zurcher C., The Post-Soviet Wars: Rebellion, Ethnic Conflict, and Nationhood in the Caucasus, New York and London, New York University Press, 2009, 289 pp.

[24] Տե՛ս Chorbajian L., Making of Nagorno-Karabagh: From Secession to Republic, London, Palgrave Publishers, 2001, 267 pp.

[25] Տե՛ս Мелик-Шахназаров А., Нагорный Карабах: Хроники ненависти, Минск, «Современная школа», 2011, 528 с.

[26] Տե՛ս Cox C., Eibner J., , Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh, Switzerland, Institute for Religious Minorities in the Islamic World, 1998, 68 pp. http://sumgait.info/caroline-cox/ethnic-cleansing-in-progress/karabakh-question-revived.htm (accessed 21.12.2021).

Ադրբեջանցի պատմաբան Զ. Բունիաթովն[27] իր աշխատանքում փորձել է առաջ բերել և հիմնավորել դեպքերի՝ հայերի կողմից կազմակերպված լինելու վարկածը, որի տեսակետը պաշտպանվում է նաև Ա. Իսմայիլովի[28] կողմից: Իսմայիլովի գիրքը հարուստ է ջարդարարներից Է. Գրիգորյանի դատավարության և վերջինիս կարևորության մասին հեղինակի կողմնակալ դիտարկումներով ու կարծիքներով:

Կիրովաբադի (Գանձակ) ջարդերի վերաբերյալ հատկապես մեծ կարևորություն է ներկայացնում Գ. Օգանեզովի և Հ. Խառատյանի կողմից հրապարակված աշխատությունը[29], որը ներառում է դեպքերի վերաբերյալ «Ահազանգ» ՀԿ-ի հավաքագրած տվյալները: Աշխատանքը ներկայացնում է իրադարձությունների ընթացքը գրեթե ժամային բացվածքով: Թեմայի վերաբերյալ առանձին վերլուծություն է հրատարակել նաև Հ. Խառատյանը[30], որտեղ քննարկվել են Կիրովաբադի հայերի ջարդերի հիմնական օրինաչափությունները: Որպես դեպքերի ականատես՝ Գանձակի հակահայկական հարձակումների համատեքստի վերաբերյալ կարևոր տվյալներ է հրապարակել Լ. Մելիք-Շահնազարյանը[31]: ԽՍՀՄ գլխավոր դատախազության ներկայացուցիչների հետ հրապարակված հարցազրույցներում[32] ևս նշվում է Սումգայիթի և Կիրովաբադի հայերի վրա հարձակումների կազմակերպված և լայնածավալ լինելը, ինչպես նաև դրանց ազգայնամոլական բնույթը:

Կիրովաբադի հակահայկական հարձակումներին են անդրադարձել Յ. Ռոստը[33], Է. Ուոլքերը և Մ. Սարոյանը[34], Ս. Կոֆմանը[35] և Մ. Փարքսը[36]: Նշված աշխատանքներն օբյեկտիվ վերլուծաբանների կողմից կարևոր ներդրում են Կիրովաբադում իրադարձությունների ցավալի ընթացքի և դրանց հետևանքների վերաբերյալ:

Բաքվում հայերի դեմ հարձակումների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար հատկապես կարևոր նշանակություն ունեն Ի. Մոսեսովայի և Ա.

---

[27] Տե՛ս Буниятов З., «Почему Сумгаит?», Известия Академии наук Азербайджанской ССР, Серия истории, философии и права. № 2, Баку, январь 1989г., стр. 355-364.

[28] Տե՛ս Исмаилов А., Сумгаит – Начало распада СССР, Баку, Чашыоглу, 2012, 220 с.

[29] Տե՛ս Оганезов Г., Харатян Г., Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев, Ереван, «Гитутюн» НАН РА, 2014, 534 с.

[30] Տե՛ս Խառատյան Հ., Հայերի տեղահանությունը Ադրբեջանից: 1988 թ. Կիրովաբադի հայերի ինքնապաշտպանության դասերը, Հայագիտական ուսումնասիրություններ, N6/2015, Ստեփանակերտ, 2015, էջ 74-97:

[31] Տե՛ս Мелик-Шахназарян Л., Гандзак. Неутраченный мир. Воспоминания очевидца, Степанакерт, «Амарас», 1996, 68 с.

[32] Տե՛ս Талашкевич А. TV-ALANEL, Leningrad, 1991. http://web.archive.org/web/20130831141627/http://media.sarinfo.org/?cat=3&page=4 (дата верификации 08.02.2022).

[33] Տե՛ս Rost Y., Armenian Tragedy: An Eyewitness Account of Human Conflict and Natural Disaster, London, Weidenfield and Nicolson, 1990, 224 pp.

[34] Տե՛ս Saroyan M., Walker E., Minorities, Mullahs, and Modernity: Reshaping Community in the Late Soviet Union, Berkeley, University of California, 1997, 230 pp.

[35] Տե՛ս Kaufman S., Modern Hatreds: The symbolic politics of ethnic war, Ithaca and London, Cornell University Press, 2001, 262 pp.

[36] Տե՛ս Parks M., "Soviet Tells of Blocking Slaughter of Armenians: General Reports His Soldiers Have Suppressed Dozens of Massacre Attempts by Azerbaijanis". Los Angeles Times, November 27, 1988, https://www.latimes.com/archives/la-xpm-1988-11-27-mn-1060-story.html (accessed 21.12.2021).

Հովնանյանի հեղինակած գիրքը[37]: Գրքում կոնկրետ նյութերի, վավերագրերի, ականատեսների վկայությունների հիման վրա քննարկվում են ողբերգական դեպքերը: Միաժամանակ, կարևոր փաստաթղթեր և մամուլի հրապարակումներ ներառվել են Վ. Հարությունյանի փաստաթղթերի և հրապարակումների ժողովածուի երրորդ հատորում[38]: Բաքվում դեպքերի ականատեսների և այն վերապրածների վկայությունների մեկ այլ կարևոր աղբյուր են «Սովորական ցեղասպանություն» ծրագրի շրջանակներում հրատարակված ժողովածուները[39]:

Բացի վերը նշվածներից, Բաքվի հայերի ջարդերի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն անկախ դիտորդների զեկույցները: Դրանց շարքում առավել կարևոր է «Human Rights Watch»-ի կողմից հրապարակված «Սև հունվարը Ադրբեջանում» զեկույցը[40], որը հիմնավորում է հարձակումների նախապես կազմակերպված լինելը և կենտրոնական իշխանությունների անգործությունը: Ադրբեջանի Հանրապետության նախագահի գրադարանի էլեկտրոնային կայքից ջնջված աղբյուրներից հնարավոր է եղել վերականգնել անկախ ռազմական փորձագետների «Վահան» («Щит») հասարակական կազմակերպության եզրակացությունը[41], որում նշվում է, որ ԽՍՀՄ ներքին զորքերն ի զորու էին կանգնեցնելու ջարդերը, իսկ Բաքուն ամբողջությամբ անընդունակ է եղել ջարդերից հայկական ընտանիքների պաշտպանությունը կազմակերպելու հարցում: ԱՄՆ-ի Ներգաղթի և քաղաքացիության ծառայությունների բյուրոյի արխիվացված զեկույցը[42] ևս հիմնավորում է Ադրբեջանում 1988-1990 թթ. բնակվող հայերի ծանր վիճակը:

Բաքվի հայերի պատմությունը և բռնագաղթը մանրամասն ներկայացված և վերլուծված են նաև Գ. Ստեփանյանի աշխատանքում[43], իսկ հենց ջարդերի ընթացքում իրավապահ մարմինների և քաղաքական ղեկավարության անգործությունը մանրամասն վերլուծել է Զ. Բալայանը[44]:

---

[37] Տե՛ս Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը. Պաշտոնական փաստաթղթեր, ականատեսների վկայություններ և այլ նյութեր 1990 թ. հունվարի 13-19-ի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով, Երևան, «Նարեկացի», 1992, 272 էջ:

[38] Տե՛ս Арутюнян В. Б., События в Нагорном Карабахе: Хроника, ч. III. Январь-декабрь 1990 года, Ереван, Изд-во НАН Арм., 1993, 297 с.

[39] Տե՛ս Обыкновенный геноцид, Геноцид длиною в век: Бакинская трагедия в свидетельствах очевидцев (книга первая), Ереван, Центр общественных связей и информации, 2016, 217 с.
Обыкновенный геноцид, Геноцид длиною в век: Бакинская трагедия в свидетельствах очевидцев (книга вторая), Ереван, Центр общественных связей и информации, 2017, 184 с.

[40] Տե՛ս Human Rights Watch/Helsinki, Conflict in the Soviet Union: Black January in Azerbaidzhan, https://www.hrw.org/legacy/reports/pdfs/u/ussr/ussr915.pdf (accessed 08.02.2022).

[41] Տե՛ս Управление делами Президента Азербайджанской Республики, Обращения, Заявления, Мероприятия, Президентская Библиотека, Общее заключение независимых военных экспертов общественной организации «Щит» на события в г. Баку 13-25 января 1990 г., стр. 47-50, https://web.archive.org/web/20130907101739/http://files.preslib.az/projects/aggression/m3_ru.pdf (дата верификации 08.02.2022).

[42] Տե՛ս United States Bureau of Citizenship and Immigration Services, Azerbaijan. The Status of Armenians, Russians, Jews and Other Minorities, 1 August 1993.

[43] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2011, 651 էջ:

[44] Տե՛ս Балаян З., Неизжитая трагедия: Десять лет назад мир узнал о жертвах армянских погромов в Баку, «Независимая Газета», Москва, 13.01.2000г., http://sumgait.info/baku/zoriy/tragedy-zoriy-10.htm (дата верификации 08.02.2022).

Սումգայիթի, Կիրովաբադի և Բաքվի հայերի ջարդերի իրավական որակման հարցում կարևոր նշանակություն են ունեցել՝ Միավորված ազգերի կազմակերպության («ՄԱԿ») 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան[45], ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1946 թ. 96 (1) բանաձևը[46], Միջազգային քրեական դատարանի վերաբերյալ Հռոմի ստատուտը[47]: Միջազգային քրեական իրավունքի զարգացումներին համահունչ հայերի զանգվածային ջարդերը վերլուծելու և որակելու շրջանակներում ուսումնասիրվել են Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի, Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի կոնկրետ գործերը, ինչպես նաև միջազգային քրեական իրավունքի և պետությունների պատասխանատվության վերաբերյալ մասնագիտական գրականությունը և ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի նախադեպերը:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամի գիտական խորհրդում: Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են թվով վեց գիտական հոդվածների տեսքով, թեմայի վերաբերյալ գիտաժողովներում ներկայացվել են զեկույցներ: Հետազոտության հիմնական իրավական եզրահանգումների շուրջ իրականացվել են աշխատանքային քննարկումներ միջազգային իրավունքի մասնագետների հետ:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 167 էջ:

Ներածության մեջ տրված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլխում՝ ***«Հայերի զանգվածային ջարդերի խորհրդային Ադրբեջանի քաղաքականության նախահիմքերը»***, ներկայացված են Ադրբեջանում հակահայկական տրամադրությունների նախադրյալները և միջէթնիկ հակասությունների երկարամյա պատմությունը: Նշվածով պատկերացում է ձևավորվում 1988-1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի զանգվածային ջարդերի պատմական համատեքստի և իրագործված հանցագործությունների ազգայնական շարժառիթների մասին:

Դեռ մինչև Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների հռչակումը հայերի և կովկասյան թաթարների (այդ շրջանում «ադրբեջանցի» եզրույթը դեռ չէր գործածվում) միջև 1905-1907 թթ. տեղի են ունեցել ռազմական բախումներ (հայտնի է նաև որպես «հայ-թաթարական բախումներ»): Առավել արյունալի բախումներ եղել են Բաքվում,

---

[45] Տե՛ս UN General Assembly, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948, United Nations, Treaty Series, vol. 78, p.277 https://www.refworld.org/docid/3ae6b3ac0.html (08.02.2022).

[46] Տե՛ս UN General Assembly, The Crime of Genocide, 11 December 1946, A/RES/96, https://www.refworld.org/docid/3b00f09753.html (08.02.2022).

[47] Տե՛ս UN General Assembly, Rome Statute of the International Criminal Court (last amended 2010), 17 July 1998, ISBN No. 92-9227-227-6 https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html (08.02.2022).

Նախիջևանում, Շուշիում և Ելիզավետպոլում (Գանձակ, Կիրովաբադ կամ Գյանջա)։ Հայ-թաթարական ընդհարումների հիմնական պատճառներից է հանդիսացել Օսմանյան կայսրության կողմից կովկասյան թաթարների շրջանում համայուրքականության գաղափարների տարածումը։ Առաջին լայնածավալ հարձակումը տեղի է ունեցել Բաքվում, երբ կովկասյան թաթարների ամբոխը շարժվել է Բաքվի հայկական թաղամասերի ուղղությամբ։

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունն ստեղծվել է Անդրկովկասյան սեյմի փլուզման հետևանքով՝ Օսմանյան կայսրության ռազմական աջակցության պայմաններում։ Հարևան Իրանը չի ողջունել «Ադրբեջան» անվանման ընտրությունը՝ դրանում տեսնելով Իրանի հետագայում տարածքային պահանջ ներկայացնելու հավակնություններ։

Հայ-թաթարական երկրորդ ռազմական բախումը տեղի է ունեցել 1918-1920 թթ.։ Այս անգամ Ադրբեջանը գործում էր Օսմանյան կայսրության ուղղակի ռազմական աջակցության պայմաններում։ Բաքվում և Շուշիում իրագործվեց հայ բնակչության կոտորած։

Նույնիսկ երկու հանրապետությունների խորհրդայնացումը չհանգեցրեց հակամարտության ամբողջական կարգավորման։ Ադրբեջանական ԽՍՀ-ում վարվում էր հայաբնակ ԼՂԻՄ-ի բնակչության տեղահանման, տնտեսական մեկուսացման և հայկական մշակույթի ճնշման քաղաքականություն։ Միաժամանակ, առաջին աշխարհամարտի և ազգամիջյան բախումների հետևանքով Նախիջևանի հայ բնակչությունը երկու անգամ տեղահանվեց, իսկ խորհրդային վարչակարգի հաստատումից հետո Ադրբեջանի և Նախիջևանի կառավարությունների որոշումներով հայ փախստականների վերադարձի համար ստեղծվում էին մի շարք խոչընդոտներ, ինչն, ի վերջո, հանգեցրեց Նախիջևանի ամբողջական հայաթափմանը։

Ադրբեջանում հայերի նկատմամբ պատմականորեն տարվել է էթնիկ խտրականության քաղաքականություն։ Այդ քաղաքականությունը դրսևորվել է ֆիզիկական բռնությունների, մշակույթի և կրոնի ճնշման, ինչպես նաև հայերի իրավունքների սահմանափակման և տնտեսական մեկուսացման ձևով։ Նշվածը բավարար հիմքեր էր ստեղծել 1988-1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ մի շարք քաղաքներում ազգայնական շարժառիթներով հայերի զանգվածային ջարդեր կազմակերպելու համար։

Աշխատանքի երկրորդ գլխում՝ ***«Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդերն ու այլ հանցագործությունները»***, ներկայացված են Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում 1988 թ. փետրվարի 27-ից 29-ն ընկած ժամանակահատվածում հայերի նկատմամբ իրագործված ջարդերի նախապատրաստումը, մեկնարկը, ընթացքը, դրանց հետևանքները և դատապարտվածության աստիճանը։

Սումգայիթի ջարդերի նախօրեին քաղաքում համակարգված եղանակով տարածվել են կեղծ տեղեկություններ հայերի կողմից ադրբեջանցիների՝ առանձին դաժանությամբ սպանությունների մասին, կազմվել են հայերի բնակության ցուցակներ, պատրաստվել և բաժանվել են հանցագործությունների գործիքները։

Սումգայիթի հայերի ջարդերն իրագործվել են ազգային ատելության շարժառիթով։ Քրեական գործերով վարույթ իրականացրած մարմինները ևս կասկածի տակ չեն դրել

այդ հանգամանքը, ինչը հավաստվում է հասանելի դատավարական փաստաթղթերով:

Արդեն ջարդերի ընթացքում Սումգայիթի միլիցիան դրսևորել է հանցավոր անգործություն, որոշ պաշտոնյաներ աչքի են ընկել իրենց սադրիչ վարքագծով, հայերի սպանությունները հիմնականում իրագործվել են հանրային վայրերում ու առանձին դաժանությամբ, ջարդարարների կողմից վերահսկվել են քաղաքի ճանապարհները, տեղի են ունեցել քաղաքի հեռախոսակապի անջատումներ, իսկ ջարդերից անմիջապես հետո անհապաղ վերացվել ու կոծկվել են հանցագործությունների հետքերը:

Սումգայիթում սպանված հայերի վերաբերյալ չկա արժանահավատ վիճակագրություն: Ըստ պաշտոնական աղբյուրների՝ Սումգայիթում առանձին դաժանությամբ սպանվել է ազգությամբ հայ 26 քաղաքացի: Չնայած դրան՝ առկա են հիմնավոր կասկածներ, որ երեք օրվա ընթացքում սպանված հայերի թիվը գերազանցել է հարյուրը: Նույն պաշտոնական տվյալների համաձայն՝ անմարդկային դաժանությամբ կատարված բռնաբարությունների զոհ է դարձել 12 կին:

Սումգայիթի հայերի նկատմամբ կատարված հանցագործությունները չեն արժանացել քաղաքական և դատահիրավական մարմինների կողմից միանշանակ որակման և դատապարտման, այլ հակառակը, տարբեր հիմնավորումներով և մեթոդներով ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը փորձել է կոծկել և թաքցնել իրականությունը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ ***«Կիրովաբադի[48] (Գանձակ) և Բաքվի հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդերն ու այլ հանցագործությունները»***, ներկայացված են Ադրբեջանի Կիրովաբադ (Գանձակ) և Բաքու քաղաքներում 1988-1990 թթ. իրագործված հայ բնակչության ջարդերի նախապատրաստման եղանակները, դրանց կազմակերպված լինելու մասին վկայող հիմնական օրինաչափությունները, ինչպես նաև դրանց հետևանքները և դատապարտվածության աստիճանը:

Կիրովաբադում 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների իրադարձությունները հաճախ մնացել են ստվերում: Ջարդերի նախօրեին Կիրովաբադի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր մոտ 280 հազար, որից՝ 40-45 հազարը ազգությամբ հայերն էին: Ուսումնասիրությունը վկայում է, որ Կիրովաբադում (ինչպես նաև դրան հարակից համայնքներում) հայերի դեմ իրականացված գործողությունները թիրախավորել են քաղաքի ամբողջ հայ բնակչությանը: Քաղաքում հայերի առավել զանգվածային սպանությունները հնարավոր չի եղել իրակագործել հետևյալ հանգամանքների բերումով՝ 1) քաղաքում հոծ բնակեցված հայկական մասի (թաղամասի) առկայությունը, 2) քաղաքի հայկական և ադրբեջանական հատվածների միմյանցից աշխարհագրական բաժանումը գետով, 3) հայերի կազմակերպված ինքնապաշտպանությունը և 4) ԽՍՀՄ զինված ստորաբաժանումների կողմից քաղաքի հայկական թաղամասի պաշտպանությունը:

Կիրովաբադի հայ բնակչության ջարդերին պատշաճ չեն արձագանքել առողջապահական համակարգը և իրավապահ մարմինները: Քաղաքի հայկական թաղամասում համատարած անջատվել են գազը, էլեկտրաէներգիան, ջրամատակարարումը, ինչպես նաև քաղաքում ակտիվորեն գործել են դրդիչներ:

---

[48] Պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գանձակ քաղաք, այժմ՝ Ադրբեջանի Հանրապետության Գյանջա քաղաք: Աշխատանքում որպես քաղաքի անվանում օգտագործվել է «Կիրովաբադը»՝ հաշվի առնելով հայերի ջարդերի իրագործման պահին քաղաքի պաշտոնական անվանումը:

Կիրովաբադում 1988 թ. նոյեմբերի 21-ից 26-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցածի կապակցությամբ ստացվել է հանցագործության մասին 1,628 հաղորդում, որոնցից՝ 1,141-ը բնակարանների ու տների ավերումների մասին: Հայերի դեմ հարձակումների հետևանքով շարքից հանվել է 34 միավոր զրահատեխնիկա: Ջարդերից ամիսներ անց՝ 1989 թ. ապրիլին, հաստատվել է Կիրովաբադի Քյափազի հաշմանդամների տնից ազգությամբ հայ 12 հաշմանդամ անձանց սպանության և վերջիններիս թաղելու մասին փաստը:

Կիրովաբադի ջարդերի նպատակը եղել է ազգությամբ հայերի սպանությունը և բռնագաղթը: Կիրովաբադի հայերի ջարդերի հետևանքներից, թերևս, ամենացավալին հանդիսացել է քաղաքի և դրա հարակից բնակավայրերի ամբողջական հայաթափումը, ինչպես նաև Ադրբեջանի մի շարք այլ քաղաքներից հայերի աննախադեպ ծավալների հասնող արտագաղթը:

Ադրբեջանական ԽՍՀ մայրաքաղաք Բաքվում հայ բնակչության հետապնդումները մեկնարկել են դեռևս 1988 թ. փետրվարին: Արդեն 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայերի դեմ տարվող քաղաքականությունը մայրաքաղաքում ստացավ նոր թափ, իսկ քաղաքի Լենինի հրապարակում սկսեցին առաջին զանգվածային ցույցերը, ինչի հետևանքով սկսվեց Բաքվից հայերի զանգվածային արտագաղթ: «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» ներկայացուցիչներն սկսել էին միջամտել տարբեր հաստատությունների աշխատանքին՝ վերջիններիս ղեկավարներին պարտադրելով հեռացնել ազգությամբ հայ աշխատակիցներին: 1989 թ. ավարտին Բաքվի բնակշահագործման գրասենյակների աշխատակիցներն սկսել էին կազմել հայերի ցուցակներ:

1989 թ. դեկտեմբերի 25-ին ոստիկանների անգործության պայմաններում դիտավորությամբ այրվեց Բաքվի հայկական Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Արդեն 1990 թ. հունվարի 13-ին ցույցի ընթացքում ցուցարարների շարքերից առանձնացել են խմբեր, որոնք սկսել են կազմակերպված իրականացնել քաղաքում դեռևս մնացող հայերի զանգվածային սպանություններ, ծեծ, բռնաբարություններ, բնակարանների ավերումներ և այլ հանցագործություններ: Կազմակերպված ջարդերը նույն տեմպերով շարունակվել են մեկ շաբաթ՝ մինչև հունվարի 19-ը: Հունվարի 20-ից Բաքվում սահմանվեց արտակարգ դրություն՝ իշխանության զավթում թույլ չտալու հիմնավորմամբ:

Ինչպես Սումգայիթի և Կիրովաբադի պարագայում, Բաքվում ևս հայերի ջարդերի ընթացքում իրավապահ մարմինները դրսևորել են անգործություն, իսկ երբեմն նաև մասնակցել են հանցագործությունների իրագործմանը, իշխանությունները պատշաճ չեն իրականացնել իրենց գործառույթները, քաղաքում գործել են ջարդարարների կազմակերպված խմբեր: Չնայած վստահելի վիճակագրության բացակայության՝ համաձայն տարբեր տվյալների՝ Բաքվում սպանված հայերի թիվը կարող էր գերազանցել 400-ը:

Բաքվի հայ բնակչության նկատմամբ իրագործված ջարդերն ու այլ հանցագործությունները Ադրբեջանում նույնպես չեն արժանացել պատշաճ քննության և ուսումնասիրության, իսկ դրանց իրական մասշտաբները և շարժառիթները շարունակվում են քողարկվել:

Աշխատանքի չորրորդ գլխում՝ ***«Հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի հանցավոր քաղաքականության ընդհանուր որակման ու***

պատասխանատվության խնդիրները», ներկայացված փաստերը համադրվում են միջազգային հանցագործություններից ցեղասպանության և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմերի հետ: Քննարկվող հանցագործությունները համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի տարրերին: Հաշվի առնելով ցեղասպանության հատուկ դիտավորության ապացուցման բարձր շեմը՝ պաշտպանության մեխանիզմների տեսանկյունից միջազգային դատական ատյանների կողմից տեսականորեն հնարավոր է նաև արարքների քննարկում որպես բնաջնջման, բռնագաղթի և հետապնդումների եղականով իրականացված մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ: Միաժամանակ, միջազգային-իրավական ատյաններում Ադրբեջանի Հանրապետության պատասխանատվության հարցի բարձրացումը բավականին խրթին, սակայն ոչ անհնար գործընթաց է, որն ունի լրացուցիչ մանրամասն ուսումնասիրման կարիք:

Ատենախոսության ***«եզրակացություններ»*** գլխում ամփոփվել են ատենախոսությունում կատարված ուսումնասիրության արդյունքները.

1. Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի նկատմամբ ազգային ատելության սերմանումն ունեցել է խորը պատմական արմատներ: Ադրբեջանում ռասիստական քաղաքականությունը և հասարակությունում այդպիսի տրամադրությունները չեն ձևավորվել Լեռնային Ղարաբաղի շուրջ «տարածքային հակամարտության» հիմքով: Հակառակը, Արցախյան (Ղարաբաղյան) շարժման ծագման հիմք է հանդիսացել հենց հայերի դեմ վարվող ազգային խտրականության քաղաքականությունը:

2. Սումգայիթում, Կիրովաբադում (ու այլ բնակավայրերում) և Բաքվում 1988-1990 թթ. հայերի նկատմամբ իրականացված ջարդերն ու այլ հանցագործություններն իրենց ամբողջության մեջ թիրախավորել են Ադրբեջանում բնակվող ամբողջ հայ բնակչությանը, դրանք եղել են հստակ նախապատրաստված ու կազմակերպված, իրականացվել են ազգային ատելության շարժառիթով՝ Ադրբեջանի իրավապահ մարմինների և իշխանությունների առնվազն անգործության ու թողտվության, եթե ոչ ուղղորդման ու համակարգման պայմաններում, զուգորդվել են հայերի համար կյանքի հետ անհամատեղելի պայմանների ստեղծմամբ, իրագործվել են նաև տեղական դրդիչների ակտիվ գործունեության (ագիտացիա) հետևանքով:

3. Այդ հանցավոր արարքներն իրենց պատմական համատեքստում և շարունակվող բնույթով համապատասխանում են ցեղասպանության հանցագործության մասին ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի հանցակազմի տարրերին:

4. Եթե անտեսելով ջարդերի՝ ընդգծված հակահայկական լինելու հանգամանքը՝ միջազգային դատական ատյանները հաղթահարված չհամարեն ցեղասպանական հատուկ դիտավորության ապացուցման շեմը, ապա 1988-1990 թթ. իրադարձություններն իրենց ամբողջության մեջ առնվազն պետք է որակվեն որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ՝ իրականացված բնաջնջման եղանակով: Հայերի նկատմամբ իրագործված հանցավոր որոշ արարքներ համապատասխանում են նաև մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններից բռնագաղթի և հետապնդման հանցակազմերի տարրերին:

5. Ադրբեջանի Հանրապետությանը 1988-1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ տարածքում հայերի զանգվածային ջարդերի առնչությամբ պահանջ ներկայացնելու հնարավոր հարթակ կարող է հանդիսանալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային

դատարանը, սակայն, այդ դեպքում անհրաժեշտություն կառաջանա նաև հիմնավորել վեճի քննության հարցում տվյալ դատական ատյանի իրավազորությունը:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրատարակումները

1. Հայերի նկատմամբ զանգվածային բռնությունների նախահիմքերը Ադրբեջանի քաղաքականությունում, «Գիտական Արցախ» պարբերական, Երևան, 2021 №2(9), էջ 39-46:
2. Սումգայիթի ջարդերի նախապատրաստումը, «Գիտական Արցախ» պարբերական, Երևան, 2021 №3(10), էջ 72-79:
3. The Start and Process of the Sumgait Pogroms of the Armenian Population, «Բանբեր հայագիտության» միջազգային հանդես, Երևան, 2022 №1, էջ 111-122:
4. Սումգայիթի հայերի զանգվածային ջարդերի հետևանքները և մեղավորների դատապարտումը, «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 2022 №1(664), էջ 30-41:
5. Organisation, management, economic consequences, and legal qualification of the massacres of Armenians in 1988 in Kirovabad (Gandzak), «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» Գիտական հանդես, Երևան, 2022 #1, հունվար–մարտ, էջ 171-176:
6. Organization, management, economic consequences, and legal qualification of the massacres of Armenians in January 1990 in Baku, «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» Գիտական հանդես, Երևան, 2022 #1, հունվար–մարտ, էջ 202-209:

ШАРАФЯН НАРЕК ГАГИКОВИЧ

ПОЛИТИКА МАССОВЫХ ПРЕСТУПЛЕНИЙ СОВЕТСКОГО АЗЕРБАЙДЖАНА В ОТНОШЕНИИ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В 1988-1990 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 8-ого июля 2022г. в 14^{00} часов на заседании Специализированного совета по Истории Армении 004 ВАК РА, при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основная цель данного исследования – проанализировать политику массовых преступлений Советского Азербайджана в отношении армянского населения в период с 1988 по 1990 годы, и на основе этого дать историко-правовую оценку данной политики.

В исследовании рассматриваются исторические истоки и предпосылки массовых преступлений, совершенных против армянского населения в Азербайджанской ССР. Кроме того, работа направлена на изучение этапов подготовки, начала, процесса, а также обстоятельств массовых преступлений, совершенных в отношении армянского населения в городах Сумгаит, Кировабад (Гандзак) и Баку Азербайджанской ССР. В диссертации также анализируются фактические обстоятельства массовых погромов армянского населения в сочетании с элементами международных преступлений, и тем самым выявляются возможные правовые основания для привлечения Азербайджанской Республики к ответственности.

Основными источниками исследования являются архивные документы (в том числе личные архивы), материалы судебных дел, показания очевидцев, личные мемуары, материалы СМИ, работы, посвященные исследованию различных аспектов рассматриваемого вопроса, а также профессиональная литература на армянском, русском и английском языках.

С первых дней своего создания Азербайджан, как отдельное государство, проводил политику дискриминации армян по национальному признаку. Эта политика продолжилась

и после советизации Азербайджана. Антиармянская политика Азербайджана приобрела еще большую масштабность и системность в контексте общественно-политического движения за право армянского населения на самоопределение в Нагорном Карабахе.

27-29 февраля 1988 года в Сумгаите произошли широкомасштабные нападения на армян. Массовые погромы армянского населения в Сумгаите положили начало новому этапу дискриминационной политики в отношении армян Азербайджана, повлекшей за собой организацию последующих массовых преступлений против армянского населения. Следующие волны широкомасштабных преступлений против армян произошли в Кировабаде (Гандзаке) в ноябре-декабре 1988 г., а затем и в столице Баку в январе 1990 г. Эти процессы привели к полной депортации проживающих в Азербайджане армян, а также к беспрецедентным по числу убийств, изнасилований, грабежей и полного лишению имущества армянского населения Азербайджана по национальному признаку.

Массовые преступления, совершенные против армянского населения в Азербайджанской ССР в 1988-1990 годах, соответствуют элементам геноцида. Если даже предположить, что в международных судебных инстанциях могут возникнуть сложности с доказательством преднамеренности и квалификации их как геноцид, то совершенные в Азербайджане преступления против армянского населения, как минимум, могут быть квалифицированы как преступления против человечности, совершенные путем истребления, депортации и преследования.

Что касается ответственности и привлечения Азербайджанской Республики к международной ответственности, то возможной судебной инстанцией может стать Международный суд ООН, однако, в этом случае будет необходимо обосновать юрисдикцию вышеупомянутого Суда. Основанием для такой юрисдикции может послужить 9-ая статья Конвенции ООН “О предупреждении преступления геноцида и наказании за него” или 40-ая статья Статута Международного Суда ООН.

В исследовании приводятся дополнительные историко-правовые аргументации для Республики Армения и Республики Арцах, которые могут быть использованны в ходе дальнейших переговоров о правовом статусе Республики Арцах.

SHARAFYAN NAREK G.

THE POLICY OF MASS ATROCITIES OF THE SOVIET AZARBAIJAN AGAINST ARMENIAN POPULATION FROM 1988 TO 1990

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Disseration will be held on July 8, 2022, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institue of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The main purpose of the Dissertation is to analyze the policy of mass atrocities of the Soviet Azerbaijan against Armenian population from 1988 to 1990 and based on that provide a historical-legal assessment of that policy.

The Dissertation examines the historical origins and prerequisites of the mass atrocities of Armenian population in Azerbaijani SSR. Moreover, it aims at studying the stages of preparation, start, process as well as the circumstances of mass atrocities committed against Armenian population in the cities of Sumgait, Kirovabad (Gandzak) and Baku of the Azerbaijani SSR. The Dissertation also analyzes the factual circumstances of the mass atrocities comparing the latter with respect to the elements of international crimes and by that reveals possible legal grounds for subjecting the Republic of Azerbaijan to responsibility.

The main sources of the research are archival documents (including personal archives), court documents, testimonies of eyewitnesses, personal memoires, press, works dedicated to specifics of the issue in matter as well as professional literature written in Armenian, Russian, and English.

Since the first days of its creation, Azerbaijan, as a separate state, has pursued a policy of national origin discrimination against Armenians. This policy further continued following the Sovietization of Azerbaijan. The anti-Armenian policy of Azerbaijan has become even more

widespread and systemic in the context of the socio-political movement for the right of the Armenian population to self-determination in the Nagorno-Karabakh.

On February 27-29, 1988, large-scale attacks on Armenians took place in Sumgait. The mass atrocities against Armenian population in Sumgait marked the beginning of a new phase of discriminatory policy against Armenians in Azerbaijan, which entailed organization of subsequent mass atrocities against Armenian population. The next waves of large-scale attacks against Armenians took place in Kirovabad (Gandzak) in November-December 1988 and in the capital Baku in January of 1990. This course of events led to the complete deportation of Armenians living in Azerbaijan as well as to an unprecedented number of killings on national grounds, rapes, robberies, and the complete deprivation of property of the Armenian population of Azerbaijan.

The mass atrocities committed against Armenian population in Azerbaijani SSR in 1988-1990 correspond to the elements of crime of genocide. Even if we assume that international courts may face difficulties in proving the special intent and qualifying the crimes as genocide, then the crimes committed in Azerbaijan against Armenian population, at least, can be qualified as crimes against humanity committed through extermination, deportation, and persecution.

What refers to the state responsibility, a possible platform for subjecting the Republic of Azerbaijan to an international responsibility can be the United Nations International Court of Justice, however, in this case it will be necessary to substantiate the jurisdiction of the Court. The basis for such jurisdiction may be the Article 9 of the UN Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide or Article 40 of the Statute of the International Court of Justice.

The Dissertation provides additional historical and legal argument for the Republic of Armenia and the Republic of Artsakh to be further considered over the course of negotiations held regarding the legal status of the Republic of Artsakh.